

ԻԲՐԵԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ո՛հ դուք, անցեալի դեռատի, ծաղկուն, գարնան հասակի կո՛յս ու պատանի՛, երբեմնի անմե՛ղ մանուկներ երկրի, որ տիրակալը դարձաք աշխարհի: Եւ հնամենի տոհմի՛կ պարոնայք, բարձրաշխարհիկ, մեծազնի՛ւ տիկնայք... Ինչպէս նաեւ դուք, որ գալիքներում շնորհելու էք ձեզ մակդիրներ ճչուն, անուններ պէս-պէս, տիտղոսներ փքուն: Եւ դուք, որ այսօր ձեզ զգում էք վերին՝ Ալեմայն ֆիւրեր, Ճենաց մանտարին, յորջորջում էք ձեզ կեսար եւ կամ շահ, թագուհի, կայզեր, գուցէ նախագահ: Մի՞թէ չէք սերտել պատմութիւնն անցեալ ահեղ, յաղթական հին իշխանների, մի՞թէ չէք տեսել ահիւն զմռսեալ, գօսացեալ կմախք մեծ փարաւոնի, աւերակ հանգիստ յոյն կուսակալի…

Անշիրիմ անցած հոռոմ կայսրերի սխրանքներն այսօր բոլորն են յիշում, թէ ինչպէս դարձան տէրը աշխարհի, իսկ յետոյ կորան յաւերժի ծոցում: Իրենց գանձերը առասպելական ագահ կուտեցին բոլոր ծագերից, բերին քարերը ալուան ու սիլուան, բարձեր յօդեցին միայն բեհեզից: Եւ ոսկի, արծաթ անյագ դիզելով՝ սենեակ ու սրահ, գաւիթ հիմնեցին, դահլիճներ պէս-պէս, օթեակ-պատշգամ, ատլաս ու գորգով ծածկեցին ամբողջ՝ յոյսով, որ մահուան մահիճում անգամ իրենց գանձերով պիտի մնան ողջ: Իսկ հիմա և դուք, նոյն ուղին բռնած, խարխափում էք զուր՝ փողով կուրացած, քանզի օրերում ձեր ունայն ու սին չիմացաք, որ մեծ Մակեդոնացին այս կեանքից գնաց՝ ձեռքերը պարզած, իր աւարները՝ անտերունչ թողած: Ցաւօք չէք լսել խօսքը իր յայտնի, որ այս աշխարհից ոչինչ չէք տանի, թէ՞ կարծում էք ձեզ ուշիմ աւելի, որ պիտի ստուերէք փարաւոն Աղեքսանդրի:

Ցարութեան յոյսով պէտք է լոկ ապրել, անանց գանձերը երկնքում դիզել: